


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄԱՏԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

1938—39 ՈՒՍ. ՏԱՐՎԱ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՑԵՎ,
ԾՐԱԳԻՐԸ



ԼՈՒՍԴԱՐՁՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1938 թ.

Հաս-ատված ե Հայր ական ԽՍՀ
Լուսժողովի տեղակալ Ա. Խահականի
Կողմից 15 նունիսի 1938 թ.

Պատ. խմբագիր Ա. Մալիսանյան
Տեխ. խմբագիր Հ. Ավետիսյան
Սրբազնի Գ. Նազիկյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՐԱՆՆԵՐԻ 1938—39 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հայկական ԽՍՀ Մանկավարժական ուսումնա-
րաններում ընդունվում են վոչ լրիվ միջնակարգ դըպ-
րոց ավարտող կամ միջնակարգ դպրոցի 7-րդ դասա-
րանն ավարտող 15-35 տարեկան քաղաքացիները:

2. Մանկավարժական ուսումնարան ընդունվող-
ները ներկայացնում են դիմում (անձամբ կամ փոս-
տով) մանկ. ուսումնարանի դիրեկտորի անունով,
կցելով դիմումին.

ա) ծննդյան վկայական.

բ) կրթության վկայական.

շ) տեղեկանք առողջության մասին.

դ) յերկու լուսանկար յուրաքանչյուրի վրա ըն-
դունվողի անձնական ստորագրությամբ:

Դիմումների ընդունելությունը Մանկավարժա-
կան ուսումնարաններում կատարվում են հունիսի
10-ից մինչև ոգոսասի 15-ը:

Փաստաթղթերը պետք ե լինեն իսկական:

3. Մանկավարժական ուսումնարաններ ընդուն-
վողները յենթարկվում են քննության ոգոսասի 16-ից
մինչև 28-ը ժամանակաշրջանում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Միջնակարգ դպրոցի

7-րդ դասարանը կամ վոչ լրիվ միջնակարգ դըպ-
րոցն ավարտողներից նրանք, ովքեր հիմնական
առարկաներից ունեն «գերազանց» գնահատական,
իսկ մյուս առարկաներից (նկարչություն, գծա-
գրություն, յերգեցողություն, Փիզիկուլտուրա)



11-2846 ԳՁ

Գլանիտի լիազոր Ա.-4020, Պատվեր № 612, Տրված 1500,

Գետհատի 1 առարան Յերեկան Ղենինը № 65

«Համից» վոչ պակաս դնահատական, Մանկավարժական ուսումնաբան ընդունվում են առանց ընդունելության քննությունների:

4. Մանկավարժական ուսումնաբանի 1-ին դասարան ընդունվողները քննության են յենթարկվում միջնակարգ դպրոցի առաջին 7-րդ դասարանների կամ վոչ լրիվ միջնակարգ դպրոցի ծավալով ըստ հատուկ ծրադրի, հետեւյալ առարկաներից.

Մայրենի լեզու (բանավոր և գրավոր).

Ռուսաց լեզու » »

Թվաբանություն » »

Հանրահաշիվ (գրավոր)

Յերկրաչափություն (բանավոր)

Աշխարհագրություն (բանավոր)

ԽՍՀՄ-ի Սահմանադրություն (բանավոր)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աղբբեջանական և ռուսական մանկավարժական ուսումնաբան ընդունվողները քննության են յենթարկվում նաև հայոց լեզվից (գրավոր և բանավոր):

5. Մանկավարժական ուսումնաբանների 2-րդ և 3-րդ դասարաններ ընդունվողները քննության են յենթարկվում մանկավարժական ուսումնաբանի նախորդ դասարանի ուսումնական պլանով սահմանված բոլոր առարկաներից:

6. Ընդունելության քննությունները հանձնողներից առաջին հերթին ընդունվում են նրանք, վորոնք ստացել են ամենաբարձր գնահատականները: 2-րդ անդամ քննվել չի թույլատրվում:

7. Մանկավարժական ուսումնաբան ընդունվողները հրամանադրվում են մանկան ուսումնաբանի դիրեկտորի հրամանով, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա:

8. Մանկավարժական ուսումնաբան ընդունված և հրամանադրված սովորողներից նրանք, վորոնք սունց հարգելի պատճառի սեպտեմբերի 1-ին չեն ներկայանա պարապմունքներին կիուսադրվեն քննությունները հանձնած այլ թեկնածուներով:

9. Քննությունները հանձնած այն սովորողները, վորոնք տվյալ Մանկավարժական ուսումնաբանում տեղ չլինելու պատճառով՝ դուրս կմնան, իրավունք ունեն նույն ուսումնական տարրում ընդունվելու այլ Մանկավարժական ուսումնաբան առանց քննությունների — ներկայացնելով փաստաթուղթ ընդունելության քննությունները հաձնելու մասին:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ա. ՀԱՅՈՅ ՀԵԶՈՒ

(Հայկական մանկ. ուսումն.)

Քերականություն, ուղղագրություն և կետա-
դրություն

1. Հնչյունաբանության տարրեր, և ուղղագրու-
թյուն: Բառի հնչյունական կազմությունը. հնչյուն
և գիր. հնչյունների դասղասումը (ձայնավորներ, բա-
ղաձայններ՝ ըստ արտասանության տեղի, ըստ ար-
տասանության վորակի), վանկ, հնչյունափոխու-
թյուն, բաղաձայնների ուղղագրություն. և ձայնավո-
րի ուղղագրությունը. յ ձայնակապը. տողագարձ.
մեծատառ և փոքրատառ:

2. Բառակազմություն: Բառի կազմությունը՝
հիմք և վերջավորություն. արմատ. նախածանց և
վերջածանց: Պարզ և բարդ բառեր, բարդ ածանցավոր
բառեր, և ձայնավոր բառակազմության մեջ. նորա-
դույն հապավումներ:

ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

3. Գոյական: Գոյականի նշանակությունը. գոյա-
կականի գործածությունը նախաղասության մեջ: Գո-

յականի փոփոխությունը ըստ հոլովների. յեզակի և
հոգնակի. հոլովների նշանակությունը. հոլովումներ.
ներ. ածականակերպ ածանցներ:

4. Ածական: Ածականի նշանակությունը. ածա-
կանի գործածությունը նախաղասության մեջ. ածա-
կանի հոլովման դեպքը. համեմատության աստիճան-
ներ. ածականակերտ ածանցներ:

5. Թվական: Թվականի նշանակությունը. թվա-
կանի գործածությունը նախաղասության մեջ. թվա-
կանի գործածությունը գոյականի հետ. թվականների
տեսակները. թվականների ուղղագրությունը. դասա-
կան թվականների ածանցները:

6. Դերանուն: Դերանունների նշանակությունը.
դերանունների գործածությունը նախաղասության
մեջ. դերանունների տեսակները. անձնական դերա-
նունների հոլովումը. ցուցական դերանունների հոլո-
վումը. փոխաղարձ դերանունների հոլովումն ու նրա
առանձնահատկությունները: Հարցական դերանուն-
ների հոլովումները:

7. Բայ: Բայի նշանակությունը. դերայները,
նրանց նշանակությունը, կազմությունը և գործածու-
թյունը նախաղասության մեջ. յեղանակային ձևերը
և նրանց գործածությունը նախաղասության մեջ:
Սահմանական յեղանակը և նրա ժամանակները, հրա-
մայական յեղանակ. ըղձական յեղանակը և նրա ժամա-
նակները. հարկադրական յեղանակը և նրա ժամա-
նակները: Բայի սեռերը: Կերպերն ըստ կազմության.
սոսկածանցավոր (ն, չ, ան, են) բայերի խոնարհու-
մը:

8. Մակրայ: Մակրայի նշանակությունը. մակ-
րայի գործածությունը նախաղասության մեջ. մակ-
րայի տեսակները, մակրայակերպ ածանցներ:

9. Կապ: Կապի նշանակությունը. կապի գործա-
ծությունը. կապի տեսակները:

10. Շաղկապ: Շաղկապի նշանակությունը. շաղ-
կապի գործածությունը. շաղկապի տեսակները:

11. Զայնարկաւթյուն: Զայնարկաւթյան նշանա-

կությունը խոսքի մեջ. կետադրությունը ձայնաբկություն ունեցող նախադասության մեջ:

12. Նախադասություն: Պարզ նախադասություն. նախադասության գլխավոր անդամները՝ յենթակա և ստորոգյալ. նախադասության յերկրորդական անդամներ՝ վորոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր և պարագա: Խնդիրների տեսակները՝ ուղղակի և անուղղակի. պարագաների տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի, ու քանակի, նպատակի և հիմունքի: Համարաս լրացումներ. կետադրությունը համարաս լրացումներ ունեցող նախադասությունների մեջ: Պարզ նախադասության տեսակները՝ համառոտ և ընդարձակ, զեղչված յենթակայով և զեղչված ստորոգյալով. նախադասություններ. անյենթակա և անստորոգյալ նախադասություններ: Պատմողական, հարցական, բացականչական, և հրամայական նախադասություններ: Կետադրությունը այդ նախադասություններում: Միջանկյալ բառ ունեցող նախադասություններուն, կետադրությունն այս նախադասություններում: Լրացման լրուցումներ, կողմնակի լրացումներ:

Բարդ նախադասություն: Բարզ նախադասության տեսակները. բարզ միավորյալ նախադասությունը և նրա կետադրությունը. բարդ համադասական նախադասությունը և նրա կետադրությունը:

Բարդ ստորադասական նախադասություն. այդ նախադասության կազմությունը (գլխավոր և յերկրորդական նախադասություն) յերկրորդական նախադասության տեսակները. կետադրությունն այդ նախադասություններում. յերկրորդական նախադասության փոխարինումը դերբայական ձևերով (լրացումներով). միջանկյալ նախադասություն. կետադրությունը այդպիսի նախադասություն ունեցող նախադասությունների մեջ. կողմնակի յենթակա:

13. Կետադրություն: Տրոհության նշանները և նրանց գործածությունը. առողանության նշաններ և

նրանց գործածությունը, բացահայտության նշանները և նրանց գործածությունը:

14. Ուղղակի խոսք, անուղղակի խոսք. ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելու հմտությունները:

2. Կարդալ, գրավոր և բանավոր խոսք

Սահուն և արտահայտիչ կարդալ անծանոթ հողվածը և պատմել կարդացածի բովանդակությունը. անսխալ շարադրություն գրել առաջարկած թեմայի շուրջը:

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Կարողանալ արագ, պարզ և արտահայտիչ կերպով բարձրաձայն ընթերցել: Կարողանալ բանավոր կերպով տալ կարդացածը և գրել կարդացած նյութի փոխադրությունը: Կարողանալ կազմել պարզ և բարդ պլան, թեզիսներ և կոնսպեկտ կարդացած նյութի վերաբերյալ:

Իմանալ հետեւյալ յերկերի բովանդակությունը և կարողանալ այն համառոտ կերպով պատճել.

1. Ֆոլկլոր.— առակներ, ասածներ: Սրանց ծագումը, ձևը, թեմատիկան և գործածության գեպքերը: Ժողովրդական յերգեր:

2. Խ. Աբովյան.— Ես գրքի ճամբի խրառը, Վ. Հ.-ից՝ Զանդի, Զմեռ: Հացակեր փեշը:

3. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ.— Յերգ ազատության:

4. Հ. Պարոնյան.— Մեծապատիլ մուրացկաններից՝ Արիսողով աղան և խմբագիրը, Արիսողով աղան բանաստեղծը:

5. Գ. Սունդուկյան.— Պեպո:

6. Պ. Պոռշյան.— Հացի խնդրից՝ Միկիտան Սաքոն, Յասառուլ: Յեցերից՝ Տանուտեր Խուզոն:

7. Ղ. Աղայան.— Յերկու քույրերից՝ Արզումանի և Ճաղարանց տղերքի կոփը, Արզումանի մայրը, Վարդանն ու Ճաղարանց Թաթոսը: Տորք անգեղ:

8. Մուրացան.— Առաքյալը:

9. Հ. Հովհաննիսյան.— Ժայռը, Ալագյազ բարձր սարին, Սարն ի վեր*), չատիկ*), Մնաք բարով, Աշուղ:

10. Շիրվանգաղե.— Արտիստը:

11. Հ. Թումանյան.— Գութանի յերգը*), Հին

որհնություն*), Թագավորն ու Զարչին, Անուշ:

12. Նարդու.— Հոգուն վրա հասավ, Նեղ որերից մեկը:

13. Ալ. Ծատուրյան.— Բանվորուհու որորը*), Արմացայն*), Զմեռային գիշեր, Թուիր այ իմ յերգ, Գիր:

14. Վ. Փափազյան.— Արտը, Հողի աշխատավորը:

15. Շ. Կուրդինյան.— Բանվորներ*), Հանգցրեք Զահեր*):

16. Ալ. Իահակյան.— Նորից յեկան գարնան անուշ որերը*), Անհուն վրեժի և ատելության . . . , Մոր սիրուր, Ախ մեր սիրալը*), Սասնա Մհեր:

17. Հ. Հակոբյան.— Մեկ ել մեկ ել*), Լուսաբացին*), Աշխատանքի յերգը, Չորագեսում, Մայիսմեկյան յերգ, Մեռան չկորան*), Յես այն եմ սիրում*), Վոլխովստրոյ:

18. Վ. Տերյան.— Արեվածագ*), Վերադարձ*), Ստեփան Շահումյանին, Լուսաբացին նա բարձրացավ կախաղան, Քեղ եմ յերդում, Արեգակը հուր, Յեկավ յերկաթ քայլով, Զարդեցեք անդուլ:

19. Արագի.— Բարելոնի աշտարակը, Հազար գըլխանի, Լույսերը, Խորհրդային առավոտ, Մել կարետը:

20. Դեմիրճյան.— Ռաշիդ:

21. Ստ. Զորյան.— Մի կյանքի պատմությունները՝ Մեր տունը, Վրեժինդրություն, Ահավոր գիշեր և անձանոթ տեղեր: Գրադարանի աղջիկը:

22. Զարյան.— Սաքո Միկինյան: Ռուշանի քարափից՝ Բուքը, Մարդը, Մեքենան . . . , Ալեքսանը վերադառնում ե Կարմիր բանակից, Առաջին բերքը, Բոռնցքները սեղմվում են, Հաղթական արյունը:

23. Սարյան.— Բալլագ, Խորհրդային Հայաստանի մասին, Տարեղարձի յերգ, Ալվարո, Պատգամավոր*):

24. Ա. Խնկոյան.— Բարեսիրտ Աղվեսը*), Փայտահատն ու մահը*), Գայլն ու կատուն*):

25. Պուշկին.— Կապիտանի աղջիկը, Դուբրովիկի, Աքսորյալ դեկարիստներին*):
26. Մ. Գորկի.— Բազեյի յերգը, Մրկահամերգը, Դանկոյի սիրտը:

27. Մայակովսկի.— 1917 թ. ապրիլ*), Խորհրդային պատորտի մասին:

28. Շոլոխով.— Հերկած խոպան:

29. Ոստրովսկի.— Ինչպես ե կոփվում պողպատը, Փոթորկածիններ:

Իմանալ՝ Պոռշյանի, Աղայանի, Հ. Հովհաննիսյանի, Շիրվանդաղեյի, Հ. Թումանյանի, Նարդոսի, Ծառուրյանի, Իսահակյանի, Հ. Հակոբյանի, Պուշկինի և Ոստրովսկու կենսագրությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Աստղանիշ չափածորդածքները իմանալ անդիր:

РУССКИЙ ЯЗЫК

1. ЧТЕНИЕ

Свободное, безошибочное и выразительное чтение легких незнакомых текстов. Краткий пересказ прочитанного. Объяснение слов и выражений как на родном, так и на русском языке.

II. УСТНАЯ И ПИСЬМЕННАЯ РЕЧЬ

Полные устные ответы на вопросы. Понимание элементарной русской речи. Рассказ содержания картинки. Письменные ответы на вопросы по содержанию прочитанного. Умение без ошибочно писать под диктовку легкие тексты. Знание основных правил русской орфографии.

III. ГРАММАТИКА

1. Предложение и его состав. Главные члены предложения. Второстепенные члены предложения. Однородные члены предложения и пунктуации. Вопросительные, восклицательные и повествовательные предложения. Полные и неполные предложения. Личные и безличные предложения. Понятие о сложном предложении.

2. Элементы фонетики. Звуки и буквы. Их классификация и основные правила их правописания.

3. Состав слова. Основа и окончание, корень, суффикс и префикс. Простейшие случаи чередования звуков. Сложные слова.

4. Существительное. Значение имени существительного. Род существительных. Склонение существительных. Употребление существительных в предложении.

5. Прилагательное. Значение прилагательных. Виды прилагательных. Изменение прилагательных по падежам, родам и числам. Согласование прилагательных с существительными при склонении. Суффиксы прилагательных и их правописание. Роль прилагательных в предложении.

6. Числительные. Значение числительного. Виды числительных. Употребление числительных с существительными. Склонение порядковых числительных.

7. Местоимения. Значение местоимения. Роль местоимений в предложении. Виды местоимений. Склонение личных, притяжательных и вопросительных местоимений.

8. Глагол. Значение глагола. Роль глагола в предложении. Спряжение глагола в окончания в прошедшем времени. Спряжение и правописание глаголов *на ся*.

9. Наречие. Значение наречий. Образование наречий. Роль наречий в предложении.

10. Предлоги. Значение предлогов. Значение предлогов в предложении. Предлоги и приставки, разница в их значениях.

11. Союзы. Значение союзов. Роль союзов в предложении.

12. Междометие. Понятие о междометии.

13. Понятие о частицах.

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թվարկության տասնորդական սիստեմը: Բազմանիշ թվերի ընթերցումն ու գրառումը: Ամբողջ թվերի գումարումը, հանումը, բազմապատկումն ու բաժանումը:

2. Այն հարցերը, վորոնց պատասխանում և թվաբանական չորս գործողություններից յուրաքանչյուրը: Ուղիղ և հակադարձ գործողություններ: Գործողությունների կարգը: Փակագծեր:

3. Գործողությունների տվյալների և արդյունքների միջև յեղած կախումը: Գործողությունների ստուգումը: Գումարի, մնացորդի, արտադրյալի և քանորդի փոփոխությունները տվյալների փոփոխման կապակցությամբ: Մնացորդի փոփոխվելը, յերբ բաժանելին և բաժանարարը փոփոխվում են նույնքան անդամ:

4. Գումարման որենքները՝ տեղափոխման և գուգորդման: Բազմապատկման որենքները՝ տեղափոխման, զուգորդման և դասավորման:

5. Թվի բաժանելիությունը: Թվի բաժանարարը: Բազմապատիկ թիվ տվյալ թվի վերաբերյալ: Պարզ և բարդ թվեր: Բաժանելիության նշանացույցերը 10-ի, 2-ի, 5-ի, 100-ի, 4-ի, 25-ի, 3-ի, 9-ի համար: Թվերի վերլծումը պարզ բազմապատկիչների: Թվի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր բազմապատիկ գոտնելը:

6. Հասարակ կոտորակներ: Համարիչ. Հայտարար: Կանոնավոր և անկանոն կոտորակներ: Անկանոն կոտորակից ամբողջ թիվն հանելը: Խառը թիվ: Խառը

թիվն անկանոն կոտորակի դարձնելը: Կոտորակի մեծության փոփոխվելը, յերբ համարիչը և հայտարարը փոփոխվում են մի քանի անգամ: Կոտորակի հիմնական հատկությունը: Կոտորակի կրծատումը և կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը: Կոտորակների բաղդատումը: Գտնել թիվի մասերը և գտնել թիվը, յերբ տրված են նրա մասերը:

7. Տասնորդական կոտորակներ: Տասնորդական կոտորակը մեծացնել և փոքրացնել 10, 100, 1000 և այլն անգամ: Տասնորդական կոտորակի կրծատումը և տասնորդական կոտորակները մի ընդհանուր հայտարարի բերելը: Չորս գործողությունները տասնորդական կոտորակներով:

8. Զափերի մետրական սիստեմը:

9. Հասարակ կոտորակը վերածել տասնորդական կոտորակի (վերջավոր և անվերջ): Տասնորդական կոտորակի արտահայտումը հասարակ կոտորակի ձևով: Գործողություններ հասարակ և տասնորդական կոտորակներով:

10. Հարաբերություն և համեմատություն: Հարաբերության անդամների միջև յեղած կախումը: Համեմատության հիմնական հատկությունները. համեմատության լուծումը:

11. Մեծությունների միջև յեղած կախումը: Ուղիղ և հակադարձ համեմատություն: Խնդիրների լուծումը՝ համեմատության և միավորի բերելու յեղակներով: Թվի բաժանումն մասերի, վորոնք համեմատական են յերկու կամ մի քանի թվերի:

12. Տոկոսներ: Տոկոսների վերաբերյալ յերեք հիմնական խնդիրներ. 1). տված թվի վորոնք տոկոս գտնելը, 2). գտնել թիվը նրա տոկոսի միջոցով, 3). գտնել յերկու թվերի տոկոսային հարաբերությունը:

Դասագիրք

Կիսելեվ — պլրոֆ. Ա. ՅԱ. Խինզինի խմբագրությամբ — V դասարանի թվաբանության դասագիրք:

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

1. Տառային արտահայտություններ: Գործակից: Աստիճան, աստիճանացույց: Տառային արտահայտությունների ընթերցումն ու գրառումը: Գործողությունների կարգը: Փակագծերի գործադրությունը: Գտնել տառային արտահայտությունների թվական արժեքը:

2. Հարաբերական թվեր: Հարաբերական թվերի բազմատումը զրոյի և միմիանց հետ: Չորս գործողություններ հարաբերական թվերով: Հարաբերական թվերն աստիճանի բարձրացնելը:

3. Միանդամ: Նման միանդամներ: Բազմանդամ: Նման միանդամների միացումը: Միանդամների և բազմանդամների գումարումը, հանումը, բազմապատկումը և բաժանումը: Միանդամը քառակուսի և խորանարդ աստիճան բարձրացնելը:

4. Կրճատ բազմապատկման և բաժանման բանաձևը:

5. Բազմանդամների վերլուծումը բազմապատկիչների (ընդհանուր բազմապատկիչը փակագծերից դուրս բերելը, խմբավորման յեղանակ, վերլուծել բազմապատկիչների՝ բանաձևերով):

6. Հանրահաշվական կոտորակներ: Նույնական կերպամիուսումներ և գործողություններ միանդամ ու բազմանդամ համարիչ ու հայտարար ունեցող հանրահաշվական կոտորակներով:

7. Նույնություններ և հավասարումներ: Հավասարման յերկու հիմնական հատկությունները: Թվական և տառային գործակիցներով 1-ին աստիճանի մի


անհայտ հավասարումների լուծումը: Կազմել հավասարումների ըստ խնդրի պայմանների:

8. Առաջին աստիճանի հավասարումների սխսեմը՝ յերկու անհայտով թվական և տառային գործակիցներով: Լուծում հանրահաշվական գումարների տեղադրման յեղանակով: Կազմել հավասարումների սխսեմ ըստ խնդրի պայմանների:

Դասագիրք

Կիսելել — հանրահաշիվ — մասն I.

11-2846Կ.87-



ՅԵՐԿՐԱՋԱՓՈՒԹՅՈՒՆ

1. Ուղիղ գիծ. ճառաղայթ. հատված: Գործողություններ հատվածներով:

2. Անկյուն: Կից անկյուններ: Ուղիղ անկյուն: Ուղղահայաց: Կից անկյունների գումարը: Ուղիղ գծի մի կողմում դասավորված անկյունների գումարը և յերկու կողմում դասավորված անկյունների գումարը: Հակադիր (ուղղահայաց) ակյուններ: Հակադիր անկյունների հավասարության թերեմա:

3. Յեռանկյունի: Յեռանկյունների գանագան տեսակները: Ուղղանկյուն յեռանկյունի. ներքնաձիգ և եջեր: Յեռանկյան գծերը՝ բարձրություն, միջնագիծ, բիսսեկտրիս: Պարագիծ: Հավասարասրուն յեռանկյան հատկությունները: Յեռանկյունների հավասարությունը: Յեռանկյունների գավասարման յերեք հատկանիշները: Յեռանկյան արտաքին անկյունը և նրա հատկությունները: Թեռերեմա յեռանկյան մեծ կողմի գիմաց ընկած անկյան մասին, և՝ հակադարձ թերեմա:

4. Ուղղահայաց: Թեք գծերը և նրանց պրոյեկցիան, իջեցված ուղիղի վրա: Թեռերեմա ուղղահայացի և թեքի, թեքերի և նրանց պրոյեկցիաների մասին: Ուղղանկյուն յեռանկյունների հավասարման չորս դեպքերը:

5. Հիմնական խնդիրները կառուցման վերաբերյալ (ապացուցումով). կառուցել անկյուն, վորն հավասար լինի տված անկյանը. բաժանել 2, 4 և 8 մասերի. անցկացնել ուղղահայաց ուղիղի վրա նրա վրա,

կամ նրանից գուրս գտնված կետի վրայով. կառուցել յեռանկյունի՝ տված ելեմենտներով. յեռանկյան մեջ կառուցել բարձրություններ, միջնագծեր և բիսսեկտրիստներ:

6. Զուգահեռ ուղիղներ: Սահմանում: Թեռերեմա յերկու ուղիղների մասին, վորոնք ուղղահայաց են յերրորդին: Անկյուններ, վորոնք ստացվում են յերկու զուգահեռ ուղիղներից, յերրորդ ուղիղով հատվելու միջոցով. նրանց հատկությունները: Ուղիղների զուգահեռականության հատկանիշները: Զուգահեռականների աքսիոման: Հետևելություններ. 1) յերկու ուղիղներ, վորոնցից յուրաքանչյուրը զուգահեռ և յերրորդին, զուգահեռ են միմյանց. 2) զուգահեռներից մեկին հատող ուղիղը, հատում է նաև մյուսին: Զուգահեռ ուղիղների կառուցումը: Անկյուններ, վորոնց կողմերը համապատասխանորեն միմյանց զուգահեռ են և ուղղահայաց: Զուգահեռականների հատվածները զուգահեռականների միջև: Հատվածը բաժանել հավասար մասերի:

7. Թեռերեմա յեռանկյուն անկյունների գումարի մասին և նրանից բղխող հետեւկությունները: 30° անկյան դիմաց ընկած եջի հատկությունը:

8. Քառանկյունի: Քառանկյունու անկյունների գումարը: Զուգահեռագիծ. ուղղանկյուն, շեղանկյուն, քառակուսի: Զուգահեռագծի ուղղանկյուն, շեղանկյան և քառակուսու անկյունների կողմերի և անկյունագծերի հատկությունները:

Պատկերների (Փիգուրա) սիմետրիան:

Տրապեզ. տրապեզի տեսակները: Յեռանկյունու և տրապեզի միջին գիծը. նրա հատկությունները: Կառուցել զուգահեռագիծ և տրապեզ:

9. Բազմանկյուն: Պարագիծ: Անկյունագիծ: Ուսուցիկ բազմանկյուն, ներքին և արտաքին անկյունների գումարը:

10. Քաղափար կետերի յերկրաչափական տեղի մասին (շրջանագիծ, հատվածի վրա կանգնեցնել ուղ-

զահայաց, անցկացնելով այն հատվածի մեջտեղով, անկյան կիսորդը (բիսսեկտրիսան), տված ուղիղներին գուգահեռ ուղիղներ):

11. Շրջանագիծ: Շրջանագիծ տանել մեկ, յերկու կամ յերեք կետով: Շրջանը և նրա համաչափությունը: Լարին ուղղահայաց տրամագծի հատկությունը. զուգահեռ լարերի միջև գտնված աղեղների հատկությունը. լարերի և աղեղների կախումը. լարերի և նրանց հեռավորության միջև կենտրոնից յեղած կախումը: Գտնել շրջագծի և աղեղի կենտրոնը:

12. Շոշափողի սահմանումը: Շոշափման կետով անցնող շառավղի հատկությունը: Շոշափող տանելը:

13. Այն անկյունների չափումը, վորոնց գագաթը գտնվում է շրջանագծի վրա, շրջանագծի ներս և շրջանագծից դուրս:

14. Յերկու շրջանագծերի հարաբերական դիրքը:

15. Ուղղագիծ պատկերների մակերեսը: Պատկերների հավասարությունը և հավասարամեծությունը: Ուղղանկյան, զուգահեռագծի, յեռանկյան, շեղանկյան, և տրապեցի մակերեսը:

Դասագիրք

Կիսելեվ (պրոֆ. Գլազուեվի խմբագրությամբ) — Յերկրաչափության դասագիրք — մասն I — հարթաչափություն:

ՀԱՐՑԵՐ ԽՍՀՄ ՍՏԱԼԻՆՑԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սահմանադրության բնորոշումը: Համառոտակի Խորհրդային առաջին Սահմանադրության և ԽՍՀՄ կազմելու մասին: Խորհրդային Միության պատմության մեջ 1924–36 թվականների ժամանակամիջոցում տեղի ունեցած հիմնական փոփոխություններն ըստ ընկ. Ստալինի ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ Արտակարգ համագումարում տված զեկուցման:

ԽՍՀՄ-Ի ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստալինը նոր Սահմանադրության ստեղծող: ԽՍՀՄ Խորհուրդների 8-րդ Արտակարգ համագումարի կողմից (1936 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) Ստալինյան Սահմանադրության միաձայն հաստատումը և ընդունումը: Նոր Սահմանադրության հիմնական առանձնահատկությունները: ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրությունը հանդիսանում է ամբողջ աշխարհում միակ մինչև վերջ դեմոկրատական սահմանադրություն:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԸ

ԽՍՀՄ-Ն բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է: Աշխատավորների պատգամավորների՝ խորհուրդները ԽՍՀՄ քաղաքական հիմքնեն: ԽՍՀՄ տնտեսական հիմքը: Սոցիալիստական սե-

փականության պետական ձեռք։ Սոցիալիստական սեփականության կողմերատիվ – կոլտնտեսային ձեռք։ Մանր մասնավոր տնտեսություն։ Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը։

Տնտեսության պլանային վարումը ԽՍՀՄ-ում։ Սոցիալիստական աշխատանքը ԽՍՀՄ-ում։

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

ԽՍՀՄ-ն միութենական պետություն է։ Միության իրավասությունը։ Միութենական հանրապետությունները և նրանց իրավունքները (թվել բոլոր 11 միութենական հանրապետությունները)։ ՈԽՖՍՀ-ի Սահմանադրությունը։ Ավտոնոմ հանրապետության Սահմանադրությունը։

Հայկական ԽՍՀ Սահմանադրությունը։

ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԴԱՆՆԵՐԸ

ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը։ Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդ։ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը։ Նոր ընտրված ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության կազմը։

Միութենական հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն որդանները։ Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն որդանները։ Պետական իշխանության տեղական որդանները։

ԽՍՀՄ ՅԵՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԴԱՆՆԵՐԸ

ԽՍՀՄ պետական կառավարման որդանները։ Ընդհանուր միութենական ժողովմատներ։ Միութե-

նական հանրապետական ժողովմատներ։ Միութենական հանրապետությունների պետական կառավարման որդանները։

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի իրավունք։ Հանգստի իրավունք։ Նյութական ապահովության իրավունք ծերության հասակում, հիվանդության և աշխատումակության կորստի գեղքում։ Կրթության իրավունք։ Բոլոր ազգությունների և ուսուաների իրավահավասարությունը։ Միասնական միութենական քաղաքացիություն։ Խղճի ազատություն և հակակրօնական պրոպագանդայի ազատություն։ Խոսքի ազատություն, մամուլի ազատություն, ժողովների և միտինգների ազատություն, փողոցային ցույցերի և դեմոնստրացիաների ազատություն։ Հասարակական կազմակերպություններում միավորվելու իրավունք։ ՀԱՄԿ(Բ)Կ-ն բոլոր աշխատավորների առաջավոր ջոկատն է, աշխատավորների ինչպես հասարակական նույնպես և պետական բոլոր կազմակերպությունների ղեկավար կորիգը։ Անձի, բնակարանի անձեռնմխելիություն և նամակագրության գաղտնիություն։ Ապաստանի իրավունք։ Քաղաքացիների պարտականությունները։ Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտքն է։

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ

Ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք գաղտնի քվեարկությամբ։ Ընտրական իրավունքը ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում։

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ա. ՑԵՐԿԻՐԸ — ՄՈԼՈՐԱԿ

1. ՑԵՐԿԻՐԸ ձեւն ու մեծությունը: ՑԵՐԵԼՎԱ ու գիշերվա փոփոխվելը: Տարվա յեղանակների փոփոխվելը:

2. Արեգակը, աստղերն ու մոլորակները: Արեգակնային համակարգություն:

բ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ

1. Կողմնացույց և կողմնորոշում: Գաղափար մասշտարի մասին. գծային և թվային մասշտար: Մի մաշտարը վերածել մյուս մաշտարի:

2. Հասարակած, արևելքարձ, բևեռային շրջաններ, բևեռները և նրանց տեղը: Աստիճանացույց: Միջորեականներ. սկզբնական միջորեական:

3. ՑԵՐԿՐԱԳՆդի վորեւե կետի աշխարհագրական լայնության և յերկարության գաղափարը:

գ. ՑԱՄԱՔ ՑԵՎ ԾՈՎ

1. Ծովի, ցամաքի և ուլյեֆի պայմանական գույները քարտեզի վրա:

2. Աշխարհի մասերը: Աշխարհի մասերը վողողող ովկիանոսները:

դ. Աշխարհամասերի տեսությունը քարտեզով

ՅԵՎՐՈՊԱ

1. ՑԵՎՐՈՊԱՅԻ ամերը վողողող ծովերն ու ովկիանոսները. Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս, Բարենցի ծով, Սպիտակ ծով, Ատլանտյան ովկիանոս, Հյուսիսային (Գերմանական) ծով, Բալթիկ ծով, Բուտնիկ, Ֆինական և Ռիգայի ծոցեր: Միջերկրական ծով, Ադրիատիկ ծով, Մարմարա ծով, Սև ծով, Ազովի ծով:

2. Նեղուցներ՝ Պաղեղ-կալե, Լամանչ, Զիբրալտար, Դարդանել, Բոսֆոր, Կերչ, Սկագերակ, Կատեգատ, Չունդ (Կերասուն):

3. Կղզիներ՝ Նոր Ցերկիր, Ֆրանց Իոսիֆի Ցերկիր, Իսլանդիա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Սիցիլիա: Թերակղզիներ՝ Կանին, Կոլա, Սկանդինավյան, Յուտլանդական, Պիրենյան Ապենինյան, Բալկանյան, Ղրիմ:

4. ՑԵՎՐՈՊԱՅԻ լեռներ՝ Սկանդինավյան, Պիրենյան, Ալպեր (Մոնթան), Ապենինյան, Կարպատներ, Բալկանյան, Ղրիմի, Ուրալյան, Խիբինի:

5. Դաշտավայրեր՝ Արևելա-յեվրոպական, Մերձկասպյան, Լոմբարդական, Ֆրանսիական, Հյուսիսդերմանական, և Մերձդանուբյան:

Բարձրություններ՝ Միջին Ռուսական, Մերձվոլգյան, Դոնեցի բլրաշարք (Կրյաժ):

Հրաբուխներ՝ Վեցուվ և Ետնա:

6. Ածուխի, յերկաթի, նավթի, և պղնձի տեղադրությունը ՑԵՎՐՈՊԱՅՈՒՄ (Կարենորագույն շրջանները):

7. Յելրոպայի գետերը՝ Պեչորա, Հս. Դվինա, Նևա, Վոլխով, Սվեր, Ամ, Դվինա, Վիսլա, Հունոս, Թեմզա, Սենա, Ելքա, Պո, Դանուր, Դնեստր, Դոն, Վոլգա (Կամայի և Ոկայի հետ), Ուրալ:

Լճեր՝ Լադոգա, Ոնեգա, Իմեն, Բելայա, Ժնեվի, Կասպից, Ելտոն, Բասկունչակ:

8. Բուսական և կենդանական աշխարհ. տունդրայի, տայգայի, տափաստանի, կիսանապատի և մերձարևադարձային գոնայի կարևորագույն բույսերն ու կենդանիները:

9. Յելրոպայի քաղաքական քարտեզը. քարտեզի վրա ցույց տալ Յելրոպայի պետությունները և նրանց մայրագաղաքները:

Ա Ս Ի Ա

1. Ասիայի ափերը վողողող ծովերը. Կարմիր, Հարավային Չինական, Արևելա-Չինական, Դեղին, Ճապոնական, Ոխոտի, Բերինդի: Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը և նրա մասերը՝ Կարայի ծով: Լապտեների ծով և Արևելա-սիրիրական ծով: Ծոցեր՝ Պարսից ծոց, Արաբական ծոց, Բենդալական ծոց: Նեղուցներ՝ Բերինդի, Թաթարական, Մալայան, Բաբելութերի:

2. Կղզիներ՝ Հյուսիսային Յերկիր, Նոր Սիրիրական, Վրանգելի, Կուրիլյան, Սախալին, Ճապոնական, Ֆորմոզա, Ֆիլիպինյան, Զոնդյան (Սումատրա, Ճավա, Բորնեո, Յելեբես), Յեյլոն:

Թերակղզիներ՝ Յամալ, Տայմիր, Չուկոտյան, Կամչատկա, Հնդկաստան, Հնդկաչին, Մալակա, Կորեա, Արաբիա, Փոքր Ասիա:

3. Ասիայի լեռները՝ Պամիր (Ստալինի անվան Պիկ), Տյան-Շան, Հինդուկուչ, Հիմալայներ, (Եվերեսոտ), Կովկասյան (Ելբրուս և Կաղեկ գագաթներով), Ալտայան, Սայանյան, Բայկալյան, Վերին-յանսկի, Ստանովյալ լեռնաշղթա, Փոքր Խինդան, Սիխոտե-Ալին, Ալդան, Յարլոնովյան լեռնաշղթան:

Բարձրավանդակներ՝ Կենտրոնական, Սիրիրական, Գոբի, Տիբետ, Իրանական, Արաբական, Հայկական:

Դաշտավայրեր՝ Արևմտա-Սիրիրական, Թուրքի, Չինական, Հնդկական, Միջադետքի, Ռիոնի և Քուռի:

4. Գետեր՝ Որ՝ Իրտիշի հետ, Յենիսեյ՝ Անդարայի հետ, Լենա, Ամուր, Խուան-Խե, Յան-Ցզի-Ցզյան, Գանգս, Ինդու, Տիգրիս՝ Յեփրատի հետ, Ամուրայա, և Սիր-Դարյա, Քուռ՝ Արաքսի հետ, Ռիոն, Ճորոխ:

Լճեր՝ Կասպից, Արալյան, Բալիսաշ, Բայկալ, Սևան:

5. Բուսական և կենդանական աշխարհ. տունդրայի, տայգայի, տափաստանի, անապատի, Մերձարևադարձային անտառի և արևադարձային շրջանի. Լարեւորագույն կենդանիներն ու բույսերը:

6. Ասիայի քաղաքական քարտեզի վրա ցույց տալ Ասիայի պետությունները և նրանց մայրագագները. Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան, Մոնղոլական ժողովրդական հանրապետություն, Տուվինական ժողովրդական հանրապետություն, Աղվանաստան, Իրան, Թուրքիա:

Ա Տ Ր Ի Կ Ա

1. Ծովերը, ծոցերն ու նեղուցները՝ Միջերկրական ծով, Կարմիր ծով, Զիբրալտարի նեղուց, Գվինեյի ծոց, Մոզամբիկի նեղուց, և Սուեզի ջրանցք:

Կղզիներ և թերակղզիներ՝ Աղորյան և Մադակասկար, Սոմալի թերակղզի:

2. Լեռներ՝ Առլաս, Հաբեշական, Դրակոնյան Հրաբուխներ՝ Կենիա, Կիրմանջարո:

3. Գետեր՝ Նեղոս, Նիկեր, Կոնգո (Վիկտորիա ջրվեժով), Զամբեզի, և Լճեր՝ Ռուգոլֆի, Տանգանիկա, Նյասա, Վիկտորիա, Զադ:

4. Ոգտակար հանածոներ՝ պղինձ, վոսկի, թան-
կագին քարեր:

5. Աֆրիկայի բուսական և կենդանական աշխար-
հը:

6. Աֆրիկայի քաղաքական քարտեզը. Անդլիայի,
Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի կարեռագույն
գաղութները:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

1. Ծովերն ու ծոցերը՝ Հյուսիսային Սառուցյալ-
ովկիանոս, Հուզոնի ծոց, Մեքսիկական ծոց, Կարա-
իբյան ծով, Մագելլանի նեղուց, Կալիֆորնիայի ծոց,
Բերինդյան ծով, Բերինդյան ծոց, Պանամայի ջրանցք:

2. Թերակղզիներ՝ Լաբբրադոր, Ֆլորիդա, Կալի-
ֆորնիա, Ալյասկա:

3. Կղզիներ՝ Գրենլանդիա, Նյուֆաունդլենդ, Մ.
Անտիլյան (Կուբա, Յամայկա, Հայտիթի, Պորտո-Ռի-
կո):

4. Ամերիկայի լեռները՝ Կորդիլիրներ (Ժայռոտ,
Կասկադի, Սիերա-Նեվադա), Ալեքաններ (Ապալաչ-
ներ), Անդեր:

5. Բարձրավանդակներ՝ Մեծ Հյուսիսային Ամե-
րիկան, Մեքսիկական, Բրազիլյական:

6. Դաշտավայրեր՝ Միսիսիպի, Ամազոնյան և
Լապլանդյան:

7. Գետեր՝ Միսիսիպի (Միսուրի և Ուայո վտակ-
ներով), Լավրենտիա, Յուկոն, Որինոկ, Ամազոնկա,
Լապլատա (Պարանա):

8. Լճեր՝ Վերին, Հուրոն, Միջիդան, Երի, Ոն-
տարիո (Նիսպարայի ջրվեժը):

9. Ոգտակար հանածոներ՝ ածուխ, նավթ, յեր-
կաթ, գունավոր մետաղներ:

10. Հյուսիսային Ամերիկայի բուսական և կեն-
դանական աշխարհը:

11. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի պե-
տությունները և կարելորագույն պետությունների

մայրաքաղաքները (ԱՄՆ, Բրազիլիա, Արգենտինա):

Ա Վ Ս Ր Ա Լ Ի Ա

1. Ծովերը նեղուցներն ու ծոցերը. Կարպենտա-
րիա ծոց, Մեծ Ավստրալիական ծոց և նեղուցներ՝
Տորեսի և Բասսի. Կորալյան ծով:

Կղզիներ՝ Տասմանիա, Նոր Զելանդիա, Նոր Գվի-
նեա, Հավայան և Պոլինեզիական կղզիներ, Յորկ թե-
րակղզին:

2. Լեռներ՝ Ավստրալիական Ալպեր և գետեր՝
Մուռեյ և Դառլինգ: Ավստրալիայի բուսական և կեն-
դանական աշխարհը:

ՅԵՐԿՐԱԴԻՑՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ

ա. Յերկրի կեղեվը

Յերկրի մակերեսի ձևերը.—(Հորիզոնական՝ կըդ-
պի, թերակղզի, պարանոց, գաղափարների սահմա-
նումը). բ) ուղղաձիգ:

1. Հարթություններն ըստ արտաքին տեսքի և
ըստ բարձրության ծովի մակերեսութից:

2. Լեռներ և բարձրություններ. Լեռնային մաս-
սիվ, լեռնաշարք և լեռնաշղթա, ուվալ:

3. Լեռնային հովիտներ, կերճեր, թամր, լեռ-
նանցքներ:

4. Լեռների բարձրությունը՝ հարաբերական և
բացարձակ: Լեռների ստորոտը, լանջերն ու գագաթ-
ները: Յերկրագնդի մակերեսութի ձևերի փոփոխու-
թյուններն արևի, ջրի, քամու և որդանիզմների ազ-
դեցության տակ: Լեռնակաղմբության պատճառները:

Հրաբխային ժայր քումներ և յերկրաշարժներ.
Արանց պատճառները:

բ. Զրային քաղանք

1. Ստորյերկրյա ջրեր և աղբյուրների գոյանալը:
2. Գետեր. գետերի գոյանալը: Գետի սկիզբը, դետարեանը, հունը, գետի աջ և ձախ ափերը: Գետի վերին, միջին և ներքին հոսանքները:
3. Գետի դելտան, գլխավոր գետ և վտակներ:
4. Ովկիանոսներ և ծովեր. ծովի հատակի ռելեֆը: Ծովի ջրի կազմությունը: Ջրի ջերմությունը՝ ովկիանոսների հատակին: Ծովի ջրի շարժումը. ալիքներ, մակընթացություն և տեղատվություն, ծովային հոսանքներ: Ներքին և յեզրային ծովեր:

գ. Մքնոլորտ և կլիմա

1. Մթնոլորտի կազմությունն ու բարձրությունը:
2. Ջերմային գոտիներ և նրանց գոյանալու պատճառները:
3. Քամիներ (պասատներ, մուսոններ, բրիզներ) և նրանց առաջ գալը:
4. Մթնոլորտային տեղումներ (անձրև, ձյուն, ցող, մառախուղ, ամպեր) և նրանց գոյանալու պատճառները:
5. Տեղումների աշխարհագրական բաշխումը:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ
ԱՇԽԱԲԱԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ, ԽՍՀՄ-ի արևմտյան, հարավային և արևելյան հարեւանները՝ ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լեհաստան, Ռուսիա, Ճապոնիա, Չինաստան, Թուրքիա, Իրան, Աղվանստան:

Տուվինական ժողովրդական հանրապետություն:

Խոնդոլական ժողովրդական հանրապետություն:

1. Այս յերկրների դիրքն ու սահմանները:

2. Բնությունը, մակերեսույթի կազմությունը, կլիման, հողը, կարեվորագույն գետերը, բուսականությունը, ոգտակար հանածոները:

3. Ժողովրդական տնտեսության բնութագիրը. ա) ժողովրդական տնտեսության տիպը՝ արդյունաբերական, կամ գյուղատնտեսական, բ) արդյունաբերության և գյուղատնտեսության կարեվորագույն ձյուղերը:

Կարեվորագույն քաղաքները:

Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և ԱՄՆ-ի կարեվորագույն գաղութները:

ԽՍՀՄ ԱՇԽԱԲԱԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ԽՍՀՄ դիրքը, տերիտորիան և սահմանները:

2. ԽՍՀՄ բնությունը, մակերեսույթի կազմությունը (կարեվորագույն լեռներ, բարձրությունները և դաշտավայրերը), ներքին ջերերը (կարեվորագույն գետերն ու լճերը), ոգտակար հանածոները (ածուխ, նավթ, յերկաթ, պղինձ): Կլիման: ԽՍՀՄ լանտափտները:

3. ԽՍՀՄ բնակչությունը — քանակը, խոսությունը, և ազգային կազմը: ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը:

4. ԽՍՀՄ քաղաքական-վարչական քարտեզը (միութենական հանրապետություններ, յերկրամասեր, մարզեր, ավտոնոմ հանրապետություններ և մարզեր ու նրանց գլխավոր քաղաքները):



13 АВГ 1938

414

11

28469

ПРАВИЛА ПРИЕМА И ПРОГРАММЫ
армянских педагогических училищ
на 1938–39 учебный год